Փաստաթղթի անվանում	Ուսանողական խորհրդի կանոնադրություն
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-19-02
Հաստատման ամսաթիվ	02/11/2009
Վերջին վերանայման ամսաթիվ	22/07/2022
Հաստատող մարմին	Կառավարման խորհուրդ
Մշակող	Ուսանողական խորհուրդ
Ներդրման պատասխանատու	Ուսանողական խորհրդի նախագահ

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն
22/07/2022	Կանոնադրությունը ամբողջովին վերանայվել է, հստակեցվել են Ուսանողական խորհրդի կառավարման մարմիններն, վերջիններիս լիազորություններն ու ընտրության կարգը: Միավորվել են ՈՒսանողական երեք կառույցները՝ Ուսանողական խորհուրդ, Ուսանողական գիտական ընկերություն և ՈՒսանողների իրավունքների պաշտպան:	Էդգար Մանուչարյան ԵՄՀ ՈՒԽ նախագահի պաշտոնակատար՝ Սամվել Պիպոյան, ԵՄՀ Կառավարման խորհրդի նախագահ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Եվրասիա միջազգային համալսարանի Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ԵՄՀ ՈՒԽ) ԵՄՀ ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման և նրա ընկերային շահերը ներկայացնող բարձրագույն ընտրովի մարմին է:

1.2. ԵՄՀ ՈՒԽ-ն ապաքաղաքական, ապակուսակցական և ներհամալսարանական կազմակերպություն է:

1.3. ԵՄՀ ՈՒԽ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը:

1.4. ԵՄՀ ՈՒԽ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը, ԵՄՀ կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.5. ԵՄՀ ՈՒԽ-ի լրիվ անվանումն է՝ հայերեն՝ Եվրասիա միջազգային համալսարանի Ուսանողական խորհուրդ, ռուսերեն՝ Студенческий Совет Международного Института Евразия, անգլերեն՝ Student Council of Eurasia International University:

1.6. ԵՄՀ ՈՒԽ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0014, Ազատության 24/2, Եվրասիա միջազգային համալսարան:

2. ՈՒԽ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ԵՄՀ ՈՒԽ-ի հիմնական նպատակներն ու խնդիրները.

- պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
- ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը,
- համալսարանի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր,
- աջակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
- իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին,
- միավորել համալսարանի ուսանողության ջանքները՝ նպաստելու ուսումնառության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանելու ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը,
- նպաստել ուսանողների գիտական և հետազոտական աշխատանքների իրականացմանը, համապատասխան հետազոտական հմտությունների զարգացմանը,
- աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
- մասնակցել ԵՄՀ տարածքում ներքին կարգապահության պահպանմանը,
- ինչպես նաև զբաղվել ուսանողներին հուզող այն խնդիրներով, որոնք նախատեսված չեն սույն կանոնադրությամբ:

2.2. ԵՄՀ ՈՒԽ-ն իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով նշված նպատակներից և խնդիրներից: Այն համագործակցում է ՀՀ-ում և արտերկրում գործող բուհական, ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերրպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ՝ փոխհարաբերությունները կառուցելով պայմանագրային և համագործակցության ու փոխշահավետության հիմունքներով:

2.3. ՈՒԽ-ն համալսարանի կանոնադրության շրջանակում, սահմանված կարգով կարող է իրականացնել հրատարակչական գործունեություն, սոցիոլոգիական և այլ կարգի հետազոտություններ, տրամադրել խորհրդատվություն, իրականացնել ծրագրեր, կազմակերպել կոնֆերանսներ, սեմինարներ, արշավներ և այլ միջոցառումներ:

3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

3.1. ԵՄՀ ՈՒԽ բարձրագույն մարմինը ուսանողների ներկայացուցիչների Ընդհանուր ժողովն է, որը հրավիրվում է յուրաքանչյուր տարին առնվազն մեկ անգամ:

3.2. Ընդհանուր ժողովը անդամները ընտրվում են երկու տարի ժամկետով ամբիոններում՝ ըստ կուրսերի (բակալավրիատ և մագիստրատուրա 1-ին կուրս) կազմակերպված ուղղակի և բաց ընտրությունների արդյունքում: Ընտրված են համարվում այն թեկնածուները, ովքեր հավաքել են ընտրություններին մասնակցած ուսանողների ձայների մեծամասնությունը:

3.3. Թեկնածուները առաջադրվում են ինքնաառաջադրման սկզբունքով կամ այլ ուսանողների կողմից: ՈՒԽ Ընդհանուր ժողովի անդամ կարող է առաջադրվել այն ուսանողը, որի միջին որակական գնահատականը 2.0 և ավելի է (առաջին կորսերում ընտրությունները կազմակերպվում են առանձին ժամանակահատվածում՝ ՄՈԳ ձևավերելուց հետո): Ուսանողը առաջին անգամ ՈՒԽ ընդհանուր ժողովի պատվիրակ չի կարող ընտրվել եթե նրա անհարգելի բացակայությունների թիվը վերջին մեկ ուսումնական տարվա ընթացքում հատում է նախատեսված լսարանային ընդհանուր ժամերի 30%-ը կամ ունի 6 կրեդիտը գերազանցող ակադեմիական պարտք (վերընտրվելու ժամանակ սույն սահմանափակումը կարող է չեղարկվել ընտրական հանձնաժողովի որոշմամբ): Մասնագիտական ուսումնական հաստատություններից (քոլեջներից) ընդունված ուսանողների պարագայում մինչ ՄՈԳ-ի ձևավորումը կիրառվում է նրա ստացած մասնագիտական կրթության վկայականում գրանցած ՄՈԳ-ի արդյունքը:

3.4. Ընտրությունների անցկացման մասին հայտարարությունը տարածվում է ընտրական հանձնաժողովի կողմից: Կուրսերում կազմակերպվող ընտրություններից առնվազն մեկ օր առաջ առաջադրվելու կամ ինքնաառաջադրվելու մասին գրավոր դիմումները ներկայացվում են Ընտրական հգանձնաժողով:

3.5. Յուրաքանչյուր ամբիոնի յուրաքանչյուր կուրսից (ըստ առկա և հեռակա ուսուցման համակարգերի) ընտրվում է առնվազն մեկ ընդհանուր ժողովի անդամ, եթե կուրսի ուսանողների թիվը 7 և ավել է, հակառակ դեպքում ընտրությունները ընտրական հանձնաժողովի որոշմամբ կարող են կազմակերպվել միավորվցած կուրսերով: Եթե կուրսի ուսանողների թիվը 30 և ավել է, ապա տվյալ կուրսից կարող է ընտրվել ընդհանուր ժողովի

երկու անդամ: Օտարերկրացի ուսանողների պարագայում ընտրական հանձնաժողովի որոշմամբ ընտրությունները կազմակերպվում են ըստ առանձին խմբերի:

3.6. ՈՒԽ ընտրությունները կազմակերպվում են ընտրական հանձնաժողովի կողմից, որը բաղկացած է 6 անդամներից, որից 3-ը առաջադրվում են Ռեկտորի կողմից և 3-ը ՈՒԽ-ի կողմից (ՈՒԽ գործող կազմի բացակայության դեպքում՝ նախպաձեռնող կազմի կողմից): Ընտրական հանձնաժողովի ամբողջական կազմը հաստատվում է ռեկտորի որոշմամբ (հանձնաժողովը ընտրում է հանձնաժողովի նախագահ և քարտուղար, որոնք ստորագրում են հանձնաժողովի նիստերի արձանագրություններն ու որոշումները): Հանձնաժողովը սահմանում է իր աշխատակարգը, հանձնաժողովի որոշումները ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

3.7. ՈՒԽ-ի աշխատանքներին ՈՒԽ կանոնադրության համաձայն կամավորության սկզբունքով կարող են ներգրավվել նաև ՈՒԽ Ընդհանուր ժողովի անդամ չհանդիսացող ուսանողներ:

3.8. **ՈՒԽ Ընդհանուր ժողովը՝**

- ընդունում է ՈՒԽ-ի կանոնադրությունը, փոփոխություններ և լրացումներ կատարում նրանում, վերջինս ուժի մեջ է մտնում ԵՄՀ Կառավարման խորհրդի կողմից հաստատման պահից,
- լսում և հաստատում է ՈՒԽ նախագահի տարեկան հաշվետվությունը,
- քննարկում և սահմանում է ՈՒԽ-ի տարեկան գործունեության կարևորագույն ուղղությունները և առաջիկա տարվա ծրագրային առաջնայնությունները,
- որոշում է կայացնում ՈՒԽ-ի վերակազմավորման վերաբերյալ,
- քվեարկությամբ երկու տարի ժամկետով ընտրում է ՈՒԽ նախագահին, ՈՒԽ նախագահության անդամներին (այդ թվում ՈՒԽ նախագահի տեղակալ(ներ), ՈՒԽ քարտուղար, ՈՒԽ հանձնաժողովի նախագահ), ՈՒԽ վերստուգիչ հանձնաժողով:

3.9. Ընդհանուր ժողովը իրավազոր է, եթե ներկա են անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի նիստերը վարում է ՈՒԽ նախագահը: Ժողովի որոշումներն ընդունված են համարվում, եթե կողմ են քվեարկել ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը: ՈՒԽ նախագահի բացակայության դեպքում (նրա ժամկետի ավարտ և այլն) ընդհանուր ժողով կարող է հրավիրել նաև ընտրական հանձնաժողովը: Մինչ ՈՒԽ նախագահի ընտրությունը ընդհանուր ժողովը վարում է ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը:

3.10. Ժողովի նիստերի արդյունքներն ամփոփվում են արձանագրությամբ, որտեղ նշվում է օրակարգը, մասնակիցների թիվը, քննարկվող հարցերի բովանդակությունը, որոշումները և քվեարկության արդյունքները: Արձանագրությունը ստորագրում է ՈՒԽ-ի նախագահը և քարտուղարը:

3.11. Նախագահության կազմը և կառուցվածքը սահմանում է ՈՒԽ Ընդհանուր ժողովը:

3.12. **Նախագահությունը՝**

- նախապատրաստում և հրավիրում է Ընդհանուր ժողովի նիստերը, հետամուտ լինում ընդունված որոշումների իրագործմանը, քննարկում ընթացիկ հարցեր,

- մշակում և համակարգում է Ժողովի ընթացիկ և հեռանկարային ծրագրերն ու աշխատանքները,
- առաջարկություններ է ներկայացնում կանոնադրությունը լրացնելու, փոփոխելու համար,
- առաջարկում է թեկնածուներ ԵՄՀ կառավարման մարմինների կազմում ընդգրկելու համար,
- հաստատում է ՈւԽ նախագահության, մշտական և ժամանակավոր հանձնաժողովների աշխատակարգերը,
- ամփոփում և վերլուծում է ուսանողների ընթացիկ առաջադիմության, ուսումնական կարգապահության վիճակը և այլն:
- որոշումներ է ընդունում ՈՒԽ կանոնադրական նպատակների և խնդիրների իրագործման նպատակով:

3.13. Նախագահության նիստերը հրավիրվում են երկու ամսիը առնվազն մեկ անգամ:

3.14. Նախագահության նիստերը իրավազոր են, եթե մասնակցում են Նախագահության անդամների առնվազն 1/2-ը: Նիստերը հրավիրվում են Նախագահության անդամների 1/3-ի պահանջով հինգ օրյա ժամկետում:

3.15. **ՈՒԽ նախագահը՝**

- կազմակերպում և համակարգում է ՈՒԽ-ի գործունեությունը,
- վարում է ՈւԽ ընդհանուր ժողովի և նախագահության նիստերը
- մասնակցում է ԵՄՀ կառավարման և գիտական խորհուրդների նիստերին,
- ՈՒԽ անդամների տալիս է հանձնարարականներ, ներկայացնում է ԵՄՀ ուսանողական խորհուրդը ներքին և արտաքին հարաբերություններում,
- Ստորագրում ֆինանսական ծախսերին առնչվող փաստաթղթեր
- կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր,
- լսում է զեկույցներ հանձնաժողովներում և ամբիոններում կատարվող աշխատանքների մասին:

3.16. Նախագահի տեղակալը կատարում է նախագահի հանձնարարականները: Նախագահի բացակայության դեպքում փոխարինում է նախագահին, նրա հանձնարարությամբ համակարգում է ՈՒԽ աշխատանքները:

3.17. Քարտուղարը վարում է ՈՒԽ արձանագրությունները, պատասխանատու է նամակագրության և փաստաթղթաշրջանառության համար, համակարգում է քարտուղարության աշխատանքը: Քարտուղարի բացակայության դեպքում քարտուղարի պարտականությունները կատարում է նախագահության կողմից լիազորված այլ ՈՒԽ նախագահության անդամ:

3.18. ՈՒԽ-ի փոխնախագահի և քարտուղարի թեկնածությունները կարող են առաջադրվել ՈՒԽ-ի նախագահի կողմից: Վերջիններս ընտրվում են Ընդհանուր ժողովի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ:

3.19. Սույն կանոնակարգով չնախատեսված և դրանում չընդգրկված այլ հարցերը կանոնակարգվում են ԵՄՀ կանոնադրությամբ և Ժողովի որոշումներով:

4. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

4.1. ՈՒԽ-ի խորհրդակցական մարմիններն են ՈՒԽ-ի մշտական հանձնաժողովները: Մշտական հանձնաժողովները ստեղծվում և լուծարվում են Ընդհանուր ժողովի որոշմամբ: Մշտական հանձնաժողովները ղեկավարում են ՈՒԽ նախագահության անդամները, իսկ դրանց կազմում ՈՒԽ նախագահության աշխատակարգի համաձայն կարող են ընդգրկվել նաև ԵՄՀ այլ ուսանողներ (յուրաքանչյուր ուսանող կարող է ընդգրկվել առավելագույնը երկու հանձնաժողովում): ՈՒԽ հանձջնաժողովների կազմը հաստատում է ՈՒԽ նախագահությունը: ՈՒԽ հանձնաժողովը յուրաքանչյուրբ կիսամյակում հրավիրում է առնվազն երկու նիստ: Հանձնաժողովի նախագահները հանձնաժողովների գործունեության վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնում են կիսամյակային կտրվածքով՝ նախագահությանը:

4.2. ՈՒԽ կազմում գործում են հետևյալ մշտական հանձնաժողովները՝

- Ուսանողական իրավունքների պաշտպանության հանձնաժողով,
- Մշակույթի, սպորտի, ազատ ժամանցի կազմակերպման հանձնաժողով,
- Կրթագիտական հարցերի հանձնաժողով - Ուսանողական գիտական ընկերություն:

4.3. Ուսանողական իրավունքների պաշտպանության հանձնաժողովը զբաղվում է ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանությամբ, ինչպես նաև իրազեկում ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին:

4.4. Մշակույթի, սպորտի, ազատ ժամանցի կազմակերպման հանձնաժողովը կազմակերպում է ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը, նպաստում ուսանողության համար բարենպաստում միջավայրի ձևավորմանը և խթանում ուսանողների մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը:

4.5. Կրթագիտական հարցերի հանձնաժողով - Ուսանողական գիտական ընկերությունը համակարգում է կրթական, գիտական և հետազոտական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների իրականացումը, ապահովում հետազոտական ծրագրերում ուսանողների ընդգրկվածությունը, ինչպես նաև կազմակերպում ուսանողական գիտաժողովներ, կոնֆերանսներ, սեմինարներ և այլ կրթական և գիտական ուղղվածություն ունեցող միջոցառումներ:

4.6. Ըստ անհրաժեշտության Ընդհանուր ժողովի կամ Նախագահության որոշմամբ կարող են ձևավորվել նաև ժամանակավոր հանձնաժողովներ:

5. ՈՒԽ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

5.1. ՈՒԽ ֆինանսական միջոցները գոյանում են ԵՄՀ հատկացումներից, դրամաշնորհներից, հանգանակություններից, նվիրատվություններից, ինչպես նաև ԵՄՀ Կանոնադրությանը չհակասող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից (հետազոտություններ, վճարովի զանազան ծառայություններ):

6. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

6.1. Վերստուգիչ հանձնաժողովն իրականացնում է ՈւԽ-ի որոշումների կանոնակարգային համապատասխանության և ֆինանսական միջոցների ու գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողությունը:

6.2. Հանձնաժողովի կազմը (մինչև երեք հոգի) ընտրվում է ՈւԽ Ընդհանուր ժողովի կողմից՝ երկու տարի ժամկետով՝ բաց քվեարկությամբ: Հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ, որը խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել ԵՄՀ ՈւԽ նախագահության նիստերին:

6.3. Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է Ընդհանուր ժողովին:

7. ՈՒԽ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

7.1. ԵՄՀ ՈւԽ-ն վերակազմավորվում է ԵՄՀ ՈւԽ Ընդհանուր ժողովի անդամների 2/3-ի որոշմամբ: